


## ՀՀ բանկային համակարգի 2008-ի գործունեության համառոտ վերլուծությունը

ՀՀ բանկային համակարգի գործունեության արդյունքների վերջին մի քանի տարիների վիճակագրությունը և կատարված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ բանկային համակարգում նկատվում է կայուն առաջընթաց. գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով ապահովվել է աճի բարձր տեմպեր: Հարկ է նշել, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում էլ բանկային համակարգը գործում է բնականոն հունով, որի մասին են վկայում համակարգի կողմից 3-րդ և 4-րդ եռամսյակների ընթացքում հիմնական ցուցանիշների գծով ապահովված արդյունքները: Սակայն, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը թողել է իր ազդեցությունը նաև մեր բանկային համակարգի վրա, որն առավելապես նկատելի դարձավ հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում, որտեղ նախորդ եռամսյակների համեմատ արձանագրվեց հիմնական ցուցանիշների համեմատական ցածր աճ, իսկ ավանդների գծով նույնիսկ նվազում: Միևնույն ժամանակ նշենք, որ տարվա կտրվածքով ապահովվել են հիմնական ցուցանիշների աճի բարձր տեմպերը. այսպես, համակարգի ընդհանուր ակտիվները 2008-ին աճել են 32.4 %-ով կամ 253.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 1036.3 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել են մոտ 69.6 մլրդ դրամով կամ 7.2 %-ով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 43.9 %-ով կամ 238.7 մլրդ դրամով: Հաշվետու տարվա ընդհանուր ակտիվների վերոնշյալ աճը հիմնականում իր արտացոլումն է գտել ֆիզիկական անձանց և տնտեսությանը տրամադրվող վարկերում:

Հաշվետու տարվա ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 51.3 %-ով կամ 219.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 15.9 %-ով կամ 15.1 մլրդ դրամով և տարեվերջին կազմել համապատասխանաբար 646.5 և 79.9 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել են 3.6 %-ով կամ 22.3 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 3.0 %-ով կամ 2.3 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ 2007-ին վարկային ներդրումներն աճել էին 67.9 %-ով կամ 172.7 մլրդ դրամով, ներդրումներն արժեթղթերում՝ 5.0 %-ով կամ 4.6 մլրդ դրամով: 2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 62.4 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 51.8 %-ը կամ 334.8 մլրդ դրամ, և այս ցուցանիշը տարվա ընթացքում աճել է 60.7 %-ով կամ 126.4 մլրդ դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 4.1 %-ով կամ 13.3 մլրդ դրամով նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 10.5 %-ի կամ 19.8 մլրդ դրամի դիմաց:

2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ  
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)




Ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը 2008-ի ընթացքում կազմել է 43.5 % կամ 90.1 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում աճը կազմել է 1.7 % կամ 5.1 մլրդ դրամ: Հաշվետու տարվա վերջում ֆիզիկական անձանց տրված վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 46.0 %-ը կամ 297.5 մլրդ դրամ, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 229.3 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 84.8 մլրդ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 78.8 %-ով կամ 101.1 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 57.0 %-ով կամ 30.8 մլրդ դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել են 1.0 % կամ 2.4 մլրդ դրամ և 0.9 % կամ 0.7 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ չորրորդ եռամսյակում համակարգին ոչ հարիր արձանագրված վերոնշյալ ցածր աճերը հիմնականում պայմանավորված են առկա համաշխարհային ֆինանսական ճգնաժամով, որի գոյությունը բանկերին ստիպում է գործել էլ ավելի զգույշ, մտածված և հաշվենկատ: Ասվածին միայն ավելացնենք, որ սպառողական վարկերը կազմել են ընդհանուր վարկային ներդրումների 35.5 %-ը, իսկ հիփոթեքային վարկերը՝ 13.1 %-ը:

Հաշվետու տարվա ընթացքում ընդհանուր ակտիվների գծով առավելագույն աճ ապահովել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը» և այն կազմել է 44.1 մլրդ դրամ, տնտեսության վարկավորման գծով՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ»՝ մոտ 23.0 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց վարկավորման գծով՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկը»՝ 22.5 մլրդ դրամ, սպառողական վարկերի գծով՝ «Յունիբանկը»՝ 19.3 մլրդ դրամ և հիփոթեքային վարկերի գծով՝ «ՎՏԲ Հայաստան Բանկը»՝ 7.3 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգի ակտիվները և վարկային ներդրումները  
2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ


Մլրդ դրամ



2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 797.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 29.1 %-ով կամ 179.8 մլրդ դրամով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում աճել է 6.5 %-ով կամ 48.5 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների տարեկան կտրվածքով աճը պայմանավորված է նաև բանկերի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների 31.3 %-ի կամ 40.9 մլրդ դրամի ավելացումով, որը տարեվերջին կազմել է 171.2 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 21.5 %-ը: Տեղին է նշել, որ հաշվետու եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցպահանջ և ժամկետային) նվազել են 5.6 %-ով կամ 13.9 մլրդ դրամով և տարեվերջում կազմել 234.5 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 29.4 %-ը, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդները նվազել են մոտ 9.1 մլրդ դրամով կամ 12.5 %-ով, իսկ ժամկետային ավանդները՝ 4.8 մլրդ դրամով կամ 2.7 %-ով: Միաժամանակ փաստենք, որ չորրորդ եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդների աճ է գրանցվել համակարգի վեց բանկերում:

Հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ներգրավման գծով առավելագույն աճ ապահովել է «Յունիբանկը», որը կազմել է 8.7 մլրդ դրամ:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը  
2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)



■ Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
 ■ Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ  
■ Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
 ■ Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները և ֆիզ. անձանց ավանդները (ցպահանջ և ժամկետային) 2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Մլրդ դրամ




■ Պարտավորություններ ■ Ֆիզ.անձանց ավանդներ

ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 43.6 %-ով կամ 72.4 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 238.4 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է բանկերի կողմից կուտակված շահույթի, ինչպես նաև կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին: Հարկ է նշել, որ ընդհանուր կապիտալը չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 9.7 %-ով կամ մոտ 21.1 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից մեկը՝ կուտակված շահույթը, չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 15.1 %-ով կամ մոտ 8.9 մլրդ դրամով՝ տարեվերջին կազմելով 67.7 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 28.4 %-ը, ընդ որում հաշվետու տարվա ընթացքում կուտակված շահույթն ավելացել է 70.5 %-ով կամ 28.0 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 7.2 %-ով կամ 10.2 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 152.5 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 64.0 %-ը: Միաժամանակ նշենք, որ 2008-ի ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել է 37.8 %-ով կամ 41.8 մլրդ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում կանոնադրական կապիտալի համարման գծով առավելագույն աճ ապահովել է «ԱՄԵՐԻՎԱՍԿԸ» և այն կազմել է 16.2 մլրդ դրամ:

ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը, կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը 2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Մլրդ դրամ



■ Ընդ. կապիտալ ■ Կանոնադրական հիմնադրամ ■ Կուտակված շահույթ/վնաս


ՀՀ բանկային համակարգում հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 28.1 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2007-ին ստացված մաքուր շահույթի ծավալը գերազանցել է 6.9 մլրդ դրամով կամ 32.5 %-ով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ապահովվել է 8.25 մլրդ դրամի մաքուր շահույթ: Տեղին է նշել, որ համակարգի բանկերից

միայն երկուսն են հաշվետու եռամսյակը փակել վճատվ, որը կազմել է 15.5 մլն դրամ: Համակարգի վճատը՝ հաշվի առնելով նաև նախորդ տարիների վճատը, տարեվերջին կազմել է 1.57 մլրդ դրամ: 2008-ի ընթացքում ստացված մաքուր շահույթի գծով առավելագույն աճ ապահովել է «ՎՏԲ Հայաստան Բանկը», որը կազմել է 2.1 մլրդ դրամ, իսկ չորրորդ եռամսյակում՝ «Արդշինհիմնվեսբանկը»՝ 1.5 մլրդ դրամ: Հաշվետու տարվա ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտներն աճել են 38.8 %-ով կամ 45.8 մլրդ դրամով, իսկ ծախսերն՝ 40.0 %-ով կամ 36.5 մլրդ դրամով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 163.6 և 127.5 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր եկամուտների աճը կազմել է 41.2 % կամ 47.8 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 41.1 % կամ 37.1 մլրդ դրամ:

2008-ի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 9.45 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 3.4 %:

ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշների գծով մանրամասն տեղեկությունները՝ ըստ բանկերի արտացոլված են աղյուսակ 1-ում:

ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշները



ՀՀ բանկային համակարգի մակրոտնտեսական բնութագրիչները

Հ/Հ	Տնտեսությունում ՀՀ բանկային համակարգի դերը բնութագրող ցուցանիշները	01.01.2006թ.	01.01.2007թ.	01.01.2008թ.	01.01.2009թ.
1	Ընդհանուր ակտիվների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	20.2	20.4	25.0	28.4
2	Ընդհանուր վարկային ներդրումների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	9.4	9.5	13.6	17.7
3	Ընդհանուր կապիտալի հարաբերությունը ՀՆԱ-ին, %	4.2	4.5	5.3	6.5
4	Ֆիզիկական անձանց ավանդների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	5.4	5.4	6.3	6.4

2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշները ըստ բանկերի,  
դրանց աճը չորրորդ եռամսյակի ընթացքում և բանկերի գրավված տեղը համակարգում

Աղյուսակ 1  
(մլն. դրամ)

Դ/Բ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդա- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդա- մենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համ ա կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումներ ը	աճ/ նվազ (%)				Ֆիզ.ան ձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույ թ	Չբաշ. շահույթ (2008 թ.)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	123800,0	22,2	1	85819,6	19,4	97734,1	38,9	2	12624,0	1,2	26065,9	5,3	1	14567,2	0,0	8772,2	4448,1
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	121818,8	12,3	2	74081,2	5,6	106309,5	3,9	1	29201,3	11,7	15509,4	7,8	5	2437,6	0,0	12709,6	3913,9
3	Արդշինհիմվեստբանկ	113833,5	-2,8	3	73115,6	-8,3	87931,0	-6,5	3	20316,4	-8,9	25902,6	12,5	2	15513,6	0,0	7115,3	5862,5
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	99240,7	1,2	4	70189,9	-6,0	75390,2	0,7	4	10904,7	-7,2	23850,5	2,9	3	13906,2	0,0	5841,5	2904,6
5	Կոնվերս Բանկ	71862,4	7,5	5	43142,1	12,9	58728,3	10,1	6	13762,2	-2,3	13134,2	1,3	6	1296,4	0,0	9287,5	2054,2
6	Յունիբանկ	68759,3	1,1	6	46690,9	-4,5	59298,6	-1,2	5	32541,4	-5,2	9460,7	10,1	8	5599,7	0,0	3504,4	1829,3
7	Հայէկոնոմբանկ	50309,8	1,4	7	28381,6	3,2	41582,9	1,1	7	4999,4	-1,8	8726,9	2,8	10	2333,3	0,0	5988,4	512,4
8	ԱՍԵՐԻՎԲԱՆԿ	49195,1	17,6	8	33830,0	44,2	28832,3	57,4	11	1900,7	-12,7	20362,7	8,2	4	18228,4	7,0	797,2	770,2
9	Ինտելլոբանկ	44321,6	8,0	9	28171,8	-2,9	35940,9	8,2	9	8093,1	-5,1	8380,7	7,1	11	2353,2	0,0	4406,7	1629,2
10	Հայբիզնեսբանկ	43155,3	12,9	10	25552,1	0,1	36219,1	-2,7	8	9916,8	1,1	6936,2	1,2	14	5000,0	0,0	1817,7	843,7
11	Անելիք Բանկ	36170,5	-0,8	11	19970,9	-2,3	30554,3	-6,0	10	6724,1	-14,0	5616,2	-2,6	18	5300,0	0,0	901,5	468,1
12	Առէկսիմբանկ	32529,9	5,9	12	19516,6	10,6	22603,2	24,4	13	6335,4	-8,3	9926,7	1,7	7	8497,3	0,0	1225,0	386,8
13	Արցախբանկ	31770,2	2,5	13	22946,5	6,2	26071,4	-12,7	12	3284,7	14,7	5698,8	11,4	17	2544,4	13,4	2608,2	778,6
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	29719,2	6,4	14	12482,2	-7,9	22170,1	-1,3	14	818,9	-63,1	7549,1	38,0	13	6128,0	49,8	1151,1	594,2
15	ԱրմՍվիսԲանկ	23482,3	2,9	15	7946,8	-6,3	17965,4	-4,7	15	1497,5	9,0	5516,8	38,7	20	5001,0	33,4	535,8	256,6
16	Զարգ. Հայկական Բանկ	16314,5	7,1	16	10226,0	10,2	10523,2	4,1	16	3672,3	-13,6	5791,3	13,3	16	4556,7	8,3	803,5	747,2
17	Պրոմեթեյ Բանկ	16140,3	1,7	17	9105,3	-11,2	7137,4	16,6	19	883,8	-5,6	9002,9	2,8	9	7200,0	0,0	1750,8	851,7
18	Կասկադ Բանկ	13906,3	-0,1	18	7555,1	-1,1	8290,6	-12,3	17	992,6	41,9	5615,6	9,2	19	5535,0	0,0	-255,4	313,1
19	Բիբլոս Բանկ Հայաստան	13795,6	71,1	19	10569,6	105,6	5493,4	115,3	21	1255,8	37,0	8302,2	74,8	12	8382,2	73,9	-96,1	-141,0
20	ԲՏԱ Բանկ	13183,6	8,6	20	5578,6	-42,5	7703,7	-26,2	18	554,9	-15,3	5479,9	58,7	22	6520,0	23,0	-1040,9	-1110,9
21	ՊրոԿրեդիտ Բանկ	11902,1	9,4	21	7208,9	1,6	6413,7	-3,4	20	910,6	41,4	5488,4	5,7	21	6090,0	5,2	-601,5	-322,2
22	Սելլաթ Բանկ	11039,0	-2,1	22	4395,7	1,1	4964,1	-6,8	22	56,1	1,4	6074,8	2,1	15	5500,0	0,0	519,9	519,8
	Ընդամենը	1036250,0	7,2		646477,0	3,6	797857,4	6,5		171246,7	-2,7	238392,5	9,7		152490,2	7,2	67742,4	28110,1

## ՀՀ բանկային համակարգի 2008-ի գործունեության արդյունքները քարտերի թողարկման և սպասարկման գծով

ՀՀ բանկային համակարգում 2008-ի ընթացքում քարտային ծառայությունների մատուցման մասով նշանակալից աճ է գրանցվել գրեթե բոլոր ցուցանիշների գծով. այսպես, հաշվետու տարվա ընթացքում թողարկվել է 221,668 քարտ, այդ թվում՝ 104,400 ArCa, 83,131 Visa և 34,137 Master քարտեր, որը 2007-ի համեմատ ցուցանիշը գերազանցել է 54.7 %-ով կամ 78,380 քարտով, ընդ որում թողարկված ArCa քարտերը գերազանցվել են 58.8 %-ով կամ 38,653 քարտով, Visa քարտերը՝ 31.7 %-ով կամ 20,028 քարտով և Master քարտերը՝ 136.4 %-ով կամ 19,699 քարտով: Տարեվերջին համակարգում ակտիվ քարտերի (չըջանառության մեջ գտնվող) քանակը կազմել է 422,309 քարտ (աճը 56.3 % կամ 152,155 քարտ), այդ թվում՝ 207,904 ArCa (աճը 50.0 % կամ 69,267 քարտ), 110,418 Visa (աճը 50.9 % կամ 56,172 քարտ) և 47815 Master քարտեր (աճը 126.6 % կամ 26,716 քարտ):


2008-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի սպասարկման ցանցում գործում է 526 ATM և 2,446 POS տերմինալ, որից 440 POS տերմինալ կանխիկ տրամադրման կետերում: Միաժամանակ նշենք, որ հաշվետու տարվա ընթացքում գործող POS տերմինալների թիվն ավելացել է 36.3 %-ով կամ 651 POS տերմինալով, իսկ ATM-ի թիվը՝ 67.5 %-ով կամ 212 ATM-ով:

ՀՀ բանկային համակարգի քարտերով 2008-ի ընթացքում կատարված ընդհանուր գործարքների ծավալը կազմել է 285.9 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 5709.6 հազ. գործարք, որոնք նախորդ տարվա համապատասխան ցուցանիշներին գերազանցել են 51.7 %-ով կամ 97.5 մլրդ դրամով և 51.6 %-ով կամ 1,943 հազ. գործարքով: Տեղին է նշել, որ տարվա ընթացքում ArCa քարտերով կատարվել է 116.8 մլրդ դրամի 2,902.5 հազ. գործարք, ընդ որում՝ գործարքների ծավալն աճել է 57 %-ով կամ 42.4 մլրդ դրամով, իսկ քանակը՝ 40.1 %-ով կամ 830.3 հազ. գործարքով, Visa քարտերով՝ 120.3 մլրդ դրամի (աճը 37.3 % կամ 32.7 մլրդ դրամ) 2,014.6 հազ. գործարք (աճը 51.2 % կամ 682.2 հազ. գործարք), իսկ Master քարտերով՝ 48.8 մլրդ դրամի (աճը 84.5 % կամ 22.4 մլրդ դրամ) 792.6 հազ. գործարք (աճը 118.9 % կամ 430.5 հազ. գործարք): Միևնույն ժամանակ նշենք, որ հաշվետու տարում բանկերի քարտերով կատարվել է 37.0 մլրդ դրամի (աճը 78.9 % կամ 16.3 մլրդ դրամ) 878 հազ. անկանխիկ գործարք (աճը 83.1 % կամ 398.4 հազ. գործարք): Նկատենք, որ, բանկային համակարգի քարտերով իրականացված ընդհանուր գործարքների ծավալում ArCa քարտերով կատարված գործարքների մասաբաժինը կազմել է 40.8 %-ը, Visa քարտերինը՝ 42.1 %-ը և Master քարտերինը՝ 17.1 %-ը:

ՀՀ բանկային համակարգի սպասարկման ցանցում հաշվետու տարվա ընթացքում կատարված ընդհանուր գործարքների ծավալն աճել է 52.8 %-ով կամ 96.1 մլրդ դրամով, իսկ քանակը՝ 44.8 %-ով կամ 1,653.6 հազ. գործարքով և տարվա կտրվածքով կազմել համապատասխանաբար 278,239 մլրդ դրամ և 5,343.3 հազ. գործարք, ընդ որում անկանխիկ գործարքների ծավալը կազմել է 23.1 մլրդ դրամ, քանակը՝ 708.2 հազ. գործարք, որը գերազանցում է նախորդ տարվա անկանխիկ գործարքների ծավալը 68.1 %-ով կամ 9.4 մլրդ դրամով և քանակը՝ 74.1 %-ով կամ 301.4 հազ. գործարքով: Հարկ է նշել, որ հաշվետու տարում ընդհանուր գործարքների ծավալում 0.8 տոկոսային կետով աճել է անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը և այն կազմել 8.3 %: Միաժամանակ ավելացնենք, որ բանկումատներով կատարված գործարքների ծավալն աճել է 66.3 %-ով կամ 77.8 մլրդ դրամով, իսկ քանակը՝ 47.8 %-ով կամ 1,372.6 հազ. գործարքով և 2008-ի ընթացքում կատարվել 195.3 մլրդ դրամի 4,247 հազ. գործարք, ընդ որում բանկումատներով կատարված անկանխիկ գործարքների ծավալն ավելացել է 35.3 մլրդ դրամով կամ 8.3 %-ով, իսկ քանակը՝ 1.1 հազ. գործարքով կամ 1.8 %-ով: Ընդհանուր առմամբ հաշվետու տարվա ընթացքում բանկումատներով կատարվել է 462.4 մլրդ դրամի 62.7 հազ. անկանխիկ գործարք:

Հաշվետու տարվա ընթացքում ինտերնետի միջոցով կատարվել է 2,292.2 մլրդ դրամի 148,557 վճարում, ընդ որում քարտից-քարտ փոխանցումների ծավալը կազմել է 1,384.6 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 14,627 փոխանցում: Միայն ավելացնենք, որ հաշվետու տարում ինտերնետային վճարումների ծավալն աճել է մոտ 2.7 անգամ, այդ թվում՝ քարտից-քարտ փոխանցումների ծավալը՝ 3.6 անգամ:

2008-ին կատարված գործարքների ծավալի կառուցվածքը



Վերլուծությունը՝ Հայաստանի բանկերի միության